

ԱՐՑԱԽԻ ՈՐՄՆԱՓԱԿ ԽԱՉՔԱՐԵՐԸ

Հայ ժողովուրդն իր բազմադարյան գոյության ընթացքում արարել է արվեստի մեծաթիվ առժեքներ: Հայկական միջնադարյան ազգային մշակույթին խիստ ինքնատիպ երևույթ է «խաչքար» կոչվող հուշարձանը: Խաչքարերը, որոնց առաջացման ակունքները սնվում են հնագույն պաշտամունքային ավանդույթներից, առաջ են եկել դեռևս նախքան քրիստոնեության որպես պետական կրոն ընդունվելը Հայաստանում: Թեև թվակիր խաչքարերից հնագույնները վերաբերում են 9-րդ դարին, այնուամենայնիվ պահպանվել են մեծ թվով անարձանագիր և առավել հնաոճ խաչքարեր, որոնք անկասկած վաղ միջնադարից են: Յուրաքանչյուր դարաշրջանում խաչքարերը անցել են կազմավորման ու զարգացման որոշակի փուլ, կրել են փոփոխություններ, ավելի ուշ՝ ենթարկվել նաև խորթ ազդեցությունների:

Խաչքար կերտվել ու կանգնեցվել է տարբեր առիթներով ու նպատակով, ինչպես՝ հանգուցյալի, նվիրատվության, հաղթանակի և այլն: Բարձր տեղերում կամ ջրբաժան լեռնագծերի վրա կանգնեցվածների մեծ մասն ունեցել է սահմանախաչի նշանակություն: Սովորաբար խաչքարի բաղկացուցիչ մասն է կազմում պատվանդանի քարը, թեև հայտնի են բազմաթիվ խաչքարեր, որոնք կանգնեցված են հսկա ժայռականգվածի կամ սարդապես հողի մեջ: Կերտվել են խաչքարեր նաև տաճարների՝ եկեղեցիների ու մատուռների պատերի մեջ տեղադրվելու նպատակով: Այս դեպքում խաչքարերի ստորին մասը, որն ավարտվում էր նեղ ելուստով պատվանդանի մեջ հագցվելու համար, բացակայում է: Բոլոր դեպքերում էլ խաչքարերը պահպանել են երեսով դեպի արևմուտք իրենց ուղղվածությունը, բացառությամբ ուշ միջնադարի այն շենքերին ու տաճարներին, որոնք ենթարկված լինելով ավերման՝ հետագայում վերակառուցվել են և վերակառուցման կամ նոր շենք կառուցելու ժամանակ, խաչքարը, որպես սուրբ մասունք, հաճախ նաև սուկ որպես շինաքար, պատահական տեղադրություն է գտել շենքի այս կամ այն հատվածում: Այդպիսի դեպքերում խաչքարը ծառայել է որպես քիվ, բարավոր, անկյունաքար և այլն: Ի սկզբանե խաչքարը հուշարձանի պատերում տեղադրելն ունեցել է տաճարի տվյալ ճակատը կամ հատվածը գեղեցկացնելու, այն առավել ընդգծելու նպատակ: Այդ կերպ են լուծված բազմաթիվ եկեղեցիների ու տաճարների արևմտյան ճակատները: Դրա փայլուն օրինակ կարող են հանդիսանալ Սաղմոսավանքի, Աղջոց վանքի Սուրբ Ստեփանոս եկեղեցու, Նոր Վարագ վանքի Անապատ եկեղեցու և այլ եկեղեցիների արևմտյան ճակատները:

Ծաղկուն միջնադարում առաջ եկան այսպես կոչված **որմնափակ** խաչքարերը, որոնք լայն տարածում գտան արևելյան և կենտրոնական Հայաստանում ու հանդիսացան հայ ճարտարապետության ինքնատիպ կառուցվածքներից՝ անցնելով զարգացման որոշ փուլ: Այդ կարգի հուշակոթողներ կառուցվեցին պատմական համեմատաբար կարճ ժամանակահատվածում՝ 12—14-րդ դարերում: Եթե հաշվի առնենք նաև դրանց պահպանված կամ կիսավեր օրինակների սակավաթվությունը, ապա պարզ կդառնա այդ կարգի հուշարձանների ուսումնասիրության կարևորությունն ու նշանակությունը:

Ստորև ներկայացնում ենք մեկ հայտնի բոլոր որմնափակ խաչքարերի ցանկը՝ դրանք հաջորդաբար գրանցելով ըստ իրենց ժամանակագրության (բարեբախտաբար դրանց մեծագույն մասը թվագրված է):

№	Թիվը	Նահանգը	շրջանը	բնակավայրը
1	1071	Արցախ	Ասկերան	Դռնավարդ
2	1071	Արցախ	Ասկերան	Դահրավ (Նահատակ Մատուռ)
3	1175	Այրարատ	Աշտարակ	Կոշ
4	1246	Արցախ	Հադրութ	Տող (Գտիչ վ.)
5	1252	Արցախ	Մարտունի	Հացի (Բռի Եղցի վանք)
6	1263	Սյունիք	Աղիզբեկով	Գյոմուր
7	1265	Այրարատ	Երևան	Քանաքեռ
8	1270	Արցախ	Մարտունի	Հացի (Բռի Եղցի վանք)
9	1271	Սյունիք	Սիսիան	Լոր
10	1276	Արցախ	Ասկերան	Դահրավ (Նահատակ Մատուռ)
11	1291	Սյունիք	Սիսիան	Բնունիս
12	1291	Սյունիք	Աղիզբեկով	Կարմրաշեն
13	1297	Այրարատ	Երևան	Ավան
14	13—րդ դար	Այրարատ	Աշտարակ	Աշտարակ
15	13—րդ դար	Արցախ	Մարտունի	Հացի (Բռի Եղցի)
16	13—րդ դար	Այրարատ	Թուրքիա	Հռոմոս (Թուրքիայում)
17	13—րդ դար	Այրարատ	Աշտարակ	Մաղմոսավանք
18	13—րդ դար	Այրարատ	Աշտարակ	Կոշ
19	13—րդ դար	Այրարատ	Աշտարակ	Բյուրական
20	13—14 դդ.	Սյունիք	Եղեգնաձոր	Ալայազ
21	1309 թ.	Այրարատ	Աշտարակ	Մաղմոսավանք
22	1340	Սյունիք	Եղեգնաձոր	Ալայազ
23	1346	Արցախ	Հադրութ	Վանք (Սպիտակ խաչ վանք)
24	XIV դ	Այրարատ	Աբովյան	Գառնի
25	XIV դ	Այրարատ	Արտաշատ	Հավուց Թառ վանք

Որմնափակ խաչքարերից հնագույնները, ինչպես հստակ երևում է կպկված աղյուսակից, թվագրված են 1071 թվականով և գտնվում են Պատմական Հայաստանի Արցախ նահանգի տարածքում: Հետաքրքրական է, որ այսօրինակ կոթողների ամենաուշ շրջանի օրինակը ևս գտնվում է Արցախի (Մեծ Հայքի արևելյան նահանգներից է) հարավային Մյուս Հաբանդ գավառի տարածքում: Այս հանգամանքը թույլ է տալիս անելու այն հետևությունը, որ որմնափակ խաչքարերը, որպես խաչքարային արվեստի՝ կոմպոզիցիոն առումով ինքնատիպ և անկախադեպ կոթողներ, որոնց ծագման ժամանակաշրջանը համընկնում է հայ արվեստի վերակենդանացման՝ հայկական վերածննդի դարաշրջանի սկզբի հետ, ծագել են Պատմական Հայաստանի արևելյան գավառների տարածքում, ունեցել լայն տարածում՝ հարապատ մնալով այն երկրամասին, որ ստեղծվել են և կերտվել պատմական ավելի երկար ժամանակահատվածում: Հնագույն որմնափակ խաչքարերը (Դռնավարդ, Դահրավ) և ամենաուշ կամ ամենավերջին շրջանի որմնափակ խաչքարը, որ մեզ հայտնի է 1346 թվականից (Վանք գյուղում), Արցախում են գտնվում: Այս առումով էլ մեծ հետաքրքրություն են ներկայացնում և ուսումնասիրության արժանի են որմնափակ խաչքարերի Արցախյան օրինակները, որոնց մենք կանդրադառնանք ստորև:

Նախապես մեջբերենք մի քանի թվական տվյալներ. այսպես՝ Արցախում պահպանվել են (հայտնի են) թվով 9 որմնափակ խաչքարեր, Սյունիքում՝ 7, իսկ Այրարատում՝ 16: Որոշ հնավայրերում այս կոթողները հանդես են գալիս խումբ-խումբ, ինչպես Այրարատի Արագածոտն գավառի Սաղմոսավանքում: Արցախում այդպիսի կոթողներ են Հացի գյուղի մոտ գտնվող Բռի Եղցի վանքում դեռևս կանգուն երեք որմնափակ խաչքարերը և Դահրավ գյուղից ոչ հեռու, Նահատակ կոչված մատուռի մոտ եղած որմնափակ խաչքարերը: 11-րդ դարի քննարկվող հուշարձանները, ինչպես այդ ցույց է տրված քարտեզում և աղյուսակում, գտնվում են Արցախի Դռնավարդ և Դահրավ գյուղերի մոտ: Այսպես՝ առաջինը, որ գտնվում է Դռնավարդ գյուղից մոտ երեք կիլոմետր հյուսիս-արևմուտք, Հղեն նահատակ կոչված եկեղեցուց 300 մետր հյուսիս, Բաղիրխան լեռան արևմտյան ջրբաժան լեռնաճյուղի վրա, անցյալ դարի վերջին կանգուն վիճակում է տեսել Մակաո եպիս. Բարխուտարյանցը: Նա արտագրել է կոթողի միակ արձանագրությունը:

ԹՎ. ՇԻ ԿԱՄԱՒ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՍ....ԳՐԻԳՈՐ.... ԱՍՏՈՒԾՈՅ ՄԻԱԲԱՆ ԵՂԲԱՐՔՍ ԼԱ...ՁԽԱՁՍ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ... ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ... ՕՀԱՆԵՍԻ ՏԵՐ ՆԵՐՍԵՍԻ Ո... ԱՂԱՒԹԵՑԵՔ

Հուշարձան-կոթողը կառուցված է կոպտատաշ դեղնավուն չեչ քարով և կանգնած միաստիճան գետնախարսխի վրա: Ինչպես նշում է Ս. Բարխուտարյանցը, կանգուն ժամանակ կոթողն ունեցել է 3 մետր լայնություն, 2 մետր հաստություն, 5 մետր բարձրություն: Որմի ներսում ագուցված են եղել երեք խաչքարեր, որոնց վրա էլ կիսաշրջան կամարի տակ տեղադրված են եղել արձանագիր քարերը: Ցավոք, ներկայումս խիստ

ավերված վիճակում է գտնվում հուշարձանը. որից մնացել է միայն կառույցի ստորին մասը: Անհետ կորել են արձանագիր քարերը, և միայն երեք խաչքարերը դեռևս տեղում են, կոթողից մի քանի մետր հեռու՝ ավերակների մեջ: Խաչքարերից երկուսը մնացել են ամբողջական, իսկ երրորդը ջարդոտված է, բաժանված մի քանի մասերի: Ուշագրավ է կոթողի դիրքը. այն գտնվում է հնագույն ճանապարհի եզրին, որտեղից բարձրանալով ճանապարհը՝ այնուհետև սկսվում է իջնել դեպի հինավուրց Քռասնի գյուղը:

Արցախում 11-րդ դարից պահպանված երկրորդ որմնափակ խաչքարը, որը նույնպես 1071 թվականից է, գտնվում է Դռնավարպի հուշարձանից մոտ 25 կմ հյուսիս-արևմուտք, Դահրավ գյուղից ոչ հեռու, բարձր բլրի վրա, որը հարավային կողմից երիվված է քարաժայռերով, որոնք անմատչելի են դարձնում բլուրն այդ կողմերից: Տեղում, միջնադարյան ավեր եկեղեցու մոտ, իրարից ոչ հեռու կանգնած են եղել երեք որմնափակ խաչքարեր: Մակար եպիս. Բարխուտարյանցը դրսնք նս տեսել է անցյալ դարի վերջին ու արտագրել տեղում պահպանված արձանագրությունները: Երախտաշատ գիտնականի այցելության ժամանակ կանգուն են եղել երկու և կիսավեր՝ մեկ որմնափակ խաչքար, որոնցից առաջին երկուսն ունեցել են շինարարական առձանագրություններ: Առաջինը, որ 1071 թվականից է, այժմ գոյություն չունի:

ԹԻՒ ՇԻ ԵՍ ՈՀԱՆ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ ԻՆՉ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԹԻԹԵՂՆԻԿԱՅ Ա-ՂԱԻԹՍ ՅԻՇԵՑԵՔ:

Երկրորդը, որ 1276 թվականից է, ունի վեց տողանոց հետևյալ շինարարական արձանագրությունը:

Ի ԹՎ (ԻՆ) ՉԻԵ ԵՍ ՀԱՍ
ԱՆ ՈՐԴԻ ՎԱՍԱԿԱ ԿԱՆԳ
ՆԵՑԻ ԶԽԱՉՍ ԵՂԲԱՒՐ ԻՄ
ԶՈՒՐՋԻՆ ՈՒՔԱՆԱ Ի ՓՐԿՈՒ
(ԹԻ) ՀՈԳՈՅ ՈՎ ԿԱՐԴԵՔ
(ՅԻ) ՇԵՔ Ի Տ(Ե)Ր

Ցավոք, այսօր կանգուն է միայն 1276 թվին կանգնեցված որմնափակ խաչքարը, իսկ մյուս երկուսի հետքերն անգամ չեն երևում: Սրբատաշ է միայն որմում ագուցված կոպգ խաչքարերի գլխին դրված կիսաշրջանաձև բարավորի քարը՝ 1276 թվականի շինարարական արձանագրությամբ: Այստեղ ևս կոթողը կանգնեցված է գետնախարսխի վրա,



1. Գյուղ Դահրավ, որմնափակ խաչքար 1276 թ.:
2. Գյուղ Հացի, որմնափակ խաչքար 1270 թ.:
3. Գյուղ Հացի, որմնափակ խաչքար XIII դարի երկրորդ կես:
4. Գյուղ Հացի. Սբ. Նշան որմնափակ խաչքարը 1252 թ.:
5. Գյուղ Տող, Գտիչ վանքի որմնափակ խաչքարը 1246 թ.:
6. Գյուղ Վանք, որմնափակ խաչքար 1346 թ.:

որն արևելյան ու հարավային մասերում երկաստիճան է: Հուշարձանի ծածկը իրականացված է եղել երկթեք տարբերակով: Մեկ հայտնի են որմնափակ խաչքարեր, որոնք ունեն միաթեք ծածկ, որպիսիք ունենք նաև ներկայացվող Արցախյան որմնափակ խաչքարերում:

Հաջորդ հնավայրը, ուր ևս, ինչպես Դահրավում, որմնափակ խաչքարերը հանդես են գալիս խմբական ձևով, գտնվում է Արցախի հինավուրց Հացի գյուղից մի քանի հարյուր մետր հյուսիս-արևելք, բարձր բլրի վրա գտնվող վաղ միջնադարյան մի վանքի շրջակայքում: Հնավայրում կան 13-րդ դարում կառուցված, ու ավելի հների վրա վերակառուցված չորս եկեղեցիներ և 4—5 որմնափակ խաչքարեր, որոնցից ցարդ կանգուն են միայն երեքը, դրանք կանգնած են իրարից ոչ հեռու, այն ճանապարհի եզրերին, որը Հացի գյուղից տանում է դեպի ամենաբարձր բլրի վրա կանգնած եկեղեցին: Բլրի ստորոտում պահպանված երկու որմնափակ խաչքարերը խիստ մոտ են իրար, իսկ երրորդը մոտ 150 մետր հեռու է վերջիններից և ավելի մոտ է հուշարձանախմբի կենտրոնական շենքերին: Այս վերջինը միակն է, ուր պահպանվել է նաև կիսաշրջան կամարը՝ կերտված սրբատաշ քարից: Այստեղ գոյություն ունեցող շինարարական արձանագրություններից, որն առավել ամբողջական է եղել Մակար Բարխուտարյանցի այցելության ժամանակ, պարզվում է, որ կոթողը կանգ-

նեցվել է 1270 թվականին: Հուշարձանը կառուցված է կոպտատաշ ու սրբատաշ քարերով: Պահպանված արձանագրությունը հետևյալն է.

ԹՎ(ԻՆ) ՉԺԹ Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՏԵՐ ԸՍՏԵՓԱՆՈՍԻ ԵՒ ՅԵՊԻՍԿՈՊՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՐ ՏԵՐ ՆԵՐՍԵՍԻ ԱՍՏՈՒԾՈՎ ՄԵՐ ԵՂԲԱՐՑԱ....ՈՒՑ ԱՅԴ ԵՂԱՅ ՎԱՐԴՍ ...ԱՅԱՐ ԿԱԹ... ՐԱՄԻԿՍ ՅՈՐԴԵԱՑՍ... ԵՒ ՇՆՈՂԱՑ ՄԵՐՈՑ....ԱԶԳԱԿԱՆԱՑ..ՐԱՐ...:

Որմի մեջ ագուցված են 4 գեղաքանդակ խաչքարեր: Նույն թվով խաչքարեր են ագուցված բլրի ստորոտում գտնվող մյուս երկու որմնափակ խաչքարերում: Կոթողը կանգնած է երկաստիճան գետնախարսխի վրա և ունի սովորականից մեծ չափեր. լայնություն՝ 380 սմ, հաստություն՝ 245 սմ, բարձրություն՝ 6 մետր: Մոտավորապես նույն չափերն ունի բլրի ստորոտում գտնվող որմնափակ խաչքարերից մեկը: Նրա չափերն են՝ լայնութ. 370 սմ, հաստութ. 240 սմ, բարձրութ. 550 սմ: Կոթողը հաստատված է եղել եռաստիճան գետնախարսխի վրա, որից ստորինն այժմ հիմնահատակ քանդվել է: Այս և վերոհիշյալ որմնափակ խաչքարերի ծածկը երկթեք է: Մակար եպիսկոպոս Բարխուտարյանցը, հաշվի առնելով այս կոթողների արտասովոր մեծությունը և ագուցված խաչքարերի առավել խորը տեղադրված լինելու հանգամանքը, հուշարձաններին տվել է «բեմ» անվանումը ու հանգել հետևյալ եզրակացության: «Կարծում ենք,—նշում է նա,— որ Աղվանից թագավորպների և իշխանպների մարմիններն ամփոփված լինին այս առանձնապես պատրաստված շինությանց մեջ և աղոթավոր վարդապետներ կարգված պաշտոնապես»[1]:

1961 թվին Բռի Եղցի հուշարձանախմբում պահպանված որմնափակ խաչքարերը տեսել է Սեդրակ Բարխուդարյանը: Նա իրավամբ նշում է. «Այս հուշարձանների մասին Մ. Բարխուտարյանցից սկսած գրականության մեջ է մտել երկու սխալ կարծիք. ա. որ իբր դրանք բացօթյա բեմեր են. բ. որ, ինչպես եկեղեցիներում, այնպես էլ այս բեմերի մոտ կարգված են եղել հատուկ վանականներ, որոնց պաշտոնն է մշտապես աղոթել դրանց մեջ թաղված աղվանից թագավորպների և իշխանպների հոգու հանգստյան համար»[2]: Իրականում այդ «բեմ» կոչվածները նույն որմնափակ խաչքարերն են, այն տարբերությամբ միայն, որ դրանց խաչքարերը փոքր ինչ խորն են ագուցված: Որմնափակ խաչքարերին տարբեր ուսումնասիրողներ տվել են տարբեր անվանումներ. օրինակ՝ Կարո Ղաֆադարյանը[3] դրանք կոչում է «շրջանակավոր խաչարձան», որ մոտավորապես կարելի է հասկանալ որմնափակ: Սա ըստ էության սխալ բնորոշում չէ:

Բռի Եղցի հուշարձանախմբում պահպանված երկրորդ որմնափակ խաչքարն ևս ունի արձանագրություն, որից միայն հատվածներ են պահպանվել: Այդ արձանագրությունը առավել ամբողջական է եղել Բարխուդարյանի ժամանակ:

.....ԻԻՐՈ ՄԱ..ՄԽԻԹԱՐՈ
ՈՎ ԱՅՐԵՑԱՑ ...ՐԵՆԱ...ԱՍՎԱՒՔ ՇԻՆԵՑԻ
ՉԱՆՊԱՏ ՅԻ...ՄՆՊԱՏԱ ՈՉ ՅԻՄԱ...
ՉԳԷԷՐԼԵԼՈՅ... ՄԽԻԹԱՐԱ Է ՄԻՆ ՊԵՏ..
Ի ՄԻՆՆ ՄՆՊԱՏ... ՍԲ ԱՂԱՒԹՍ ՉԵՐ...

Կոթողի մեջ տեղադրված խաչքարերից ներքև, քիվագոտու երեք քարերի վրա մնացել են՝

«.....ՆԱՑՍ ՅԱՂԱՒԹՍ ՅԻՇԵՑԷՔ» բառերը:

Այս վերջին արձանագրությունը հավանաբար վարպետի (ճարտարապետի) հիշատակությունն է: Ժամանակագրության առումով այս կոթողը մոտ է նախոյդին և հավանաբար կառուցվել է 13-րդ դարի երկրորդ կեսում: Ընդամենը մի քանի մետր դեպի հարավ կանգուն է հուշարձանախմբի երրորդ որմնափակ խաչքարը: Սրանց արանքով է անցնում այն հնագույն ճանապարհը, որը տանում է դեպի բլրի գագաթի հուշարձանները: Այս առումով, տեղում, այս երկու որմնափակ խաչքարերը դարպասի տպավորություն են թողնում: Բռի Եղցի հուշարձանախմբի վերջին որմնափակ խաչքարը միակն է, որ կառուցված է համակ սրբատաշ քարով, այն արտակարգ նուրբ լուծումներ ունի նաև առանձին մանրամասներում: Կոթողի արևմտյան ճակատում ևս տեղադրված են չորս գեղաքանդակ խաչքարեր՝ դեղին, վարդագույն, մանուշակագույն և գորշ գույնի քարերից կերտված: Խաչքարերից ցած՝ կառույցի ստորին ճակատային մասը լուծված է շախմատաձև քանդակներով: Կոթողը պատկանում է միաթեք ծածկ ունեցող որմնափակ խաչքարերի տարբերակին: Շենքը հաստատված է երկաստիճան սրբատաշ գետնախարսխի վրա, որը հյուսիսակողմում ծածկված է հողով: Կառույցի արևմտյան ճակատում պահպանվել են երկու արձանագրություններ: Նույն ճակատի հյուսիսային որմի վրա յոթ տողով պահպանվել է վարպետ-ճարտարապետի թողած հիշատակությունը:

[1] **Մակար եպիս. Բարխուտարեանց,** «Արցախ», էջ 125, ԲԱԳՈՒ 1895 թ.:

[2] Դիվան հայ վիմագրության, հ. 5, էջ 153—154:

[3] **Կարո Ղաֆադարյան.** «Միջնադարյան հուշարձանները», Երևան, էջ 81:



Բռի Եղցի վանքի որմնափակ խաչքարերը

ԵՍ ԽԱՉԻՆԵ
Կ ԱՆԵՑԻ ՎԱՐ
ԴՊԵՏ ՍԲ ՆՇ
ԱՆԻՍ ՈՐԴԻ ՎԱՐ
ԿԱՄԱ ՈՐՔ ԿԱՐ
ԴԷՔ ՅԱՂԱԻԹՍ
Ս ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ

Պարզվում է, որ կոթողը կոչվել է Սուրբ Նշան, իսկ կառուցողը հայոց մայրաքաղաք Անիից է եղել, Վարկամի որդի Խաչենիկը[4]:

Խաչենիկ Անեցու[5] կառուցած Սուրբ Նշան որմնափակ խաչքարի կիսաշրջան կամարի (չի պահպանվել) տակ, քառյակ խաչքարերի վրա պահպանվել են ընդարձակ շինարարական արձանագրության մնացորդները: Եպիսկոպոս Բարխուտարյանցն այն արտագրել է հետևյալ կերպ.

ՆԱ ԹԻԻՍ... ՏԷՐ ՎԱՐԹ.... Ի ՏԱՐԻՆ Ի ԺԱՄ... ԱՂՏԱՏԵ... ԱՆԷԱՔՍ... ՄԵՐ ՍՈՒ ...ԱՂԱՉԵՄ:

Ինչպես նշում է Ս. Բարխուդարյանը, կոթողի թվագրումը ՆԱ (952) միանգամայն անհավանական է: Բայց պետք է նկատել, որ երախտաշատ գիտնականը հենց այնպես չէր կարող արտագրել՝ ՆԱ: Այստեղ պետք է նշել, որ տեղում Ն և Չ տառերը իրենց գրչության ձևով խիստ նման են միմյանց, և միանգամայն հավանական է, որ Մակար եպիս. Բարխուտարյանցը Չ-ի փոխարեն արտագրել է Ն: Խաչենիկ Անեցին համալիրում կառուցել է ևս մի եկեղեցի, որն անկասկած 13-րդ դարի շենք է, ուր նույնպես պահպանվել է իր կողմից թողած մի հիշատակություն: Այստեղից պետք է հետևություն անել, որ Սուրբ Նշան որմնափակ խաչքարը Խաչենիկ Անեցին կառուցել է ՉԱ (1252) թվականին:

Հաջորդ Արցախյան որմնափակ խաչքարը գտնվում է ավելի դեպի հարավ, պատմական Մյուս Հաբանդ գավառում, որն ուշ միջնադարում կոչվում էր Դիվակ: Գավառի ամենանշանավոր հոգևոր կենտրոն Գտիչ վանքում է գտնվում 1246 թվականից պահպանված Արցախյան նախավերջին որմնափակ խաչքարը: Այն կանգնեցված է Գտիչ վանքի կաթողիկե եկեղեցու կառուցման ավարտի կապակցությամբ, թեև այդ մասին բառացի չի

[4] Թ. Խ. Հակոբյան. «Անիի Պատմություն» գիրք 2-րդ, էջ 234—235:

[5] Սեդրակ Բարխուդարյան. «Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ» էջ 98—99:

հիշատակում Վրթանես եպիսկոպոսը: Կոթողը կանգնեցված է կաթողիկե եկեղեցուն կից՝ արևմուտքից: Նույն կողմից եկեղեցուն կից է գավիթը: Այս արտասովոր երևույթը, երբ որմնափակ խաչքարը կանգնեցրել են շենքի ներսում, եզակի դեպք է: Այդ կապակցությամբ Ս. Բարխուդարյանը[6] նշում է. «Հապվագյուտ դեպք է, երբ շենքի ներսում որմնափակ խաչքար է կանգնեցվում»: Սակայն Գտիչ վանքի մանրամասն ուսումնասիրությունները և մեր կողմից կատարված համալիրի չափագրումն ի հայտ բերեցին նոր տվյալներ: Այսպես՝ գավիթը, որն ունի երկնավ հապվագյուտ լուծում (նույնատիպ է Գնդեվանքի գավիթը Սյունիքում), կառուցվել է եկեղեցուց, հետևաբար նաև որմնափակ խաչքարից հետո: Այսպիսով վերանում է այս որմնափակ խաչքարի, որպես շենքի ներսում կառուցված կոթողի, եզակի նմուշ լինելու հաստատումը: Կոթողը կերտված է համակ սրբատաշ դեղնավուն քարից ու կանգնած եռաստիճան գետնախարսխի վրա: Ի տարբերություն մյուս որմնափակ խաչքարի, սույն կոթողն ունի արմատական որոշ տարբերություններ: Օրինակ՝ այս կոթողը չունի գետնախարսխից վերև և խաչքարի տակ եղած ճակատային ուղղանկյունաձև հատվածը: Սովորական որմերը, որոնք երիվում էին խաչքարը (կամ խաչքարերը) հյուսիսից և հարավից, այս դեպքում փոխարինված են նրբաակերտ քիվագոտիով, որն օղակում է խաչքարը նաև վերևից՝ փոխարինելով կիսաշրջան կամարին: Խաչքարի ստորին մասում արձանագրություն 2 տողով:

Ի ԹՎԻ (Ն) ՈՂԵ ԵՍ ՏՐ ՎՐԹԱՆ
ԷՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԶԽԱՉՍ Ի ՓՐԿՈՒԹ ՀՈԳՈՅ ԻՄՈՅ

Թվում է, թե կառուցող վարպետ-ճարտարապետը, կերտելով Գտչավանքի նրբարվեստ կաթողիկե եկեղեցին, արևմուտքից կցված այս որմնափակ խաչքարին տվել է այնպիսի յուրահատուկ լուծում, որը խիստ ներդաշնակ է ու համաչափ տաճարի արևմտյան ամբողջ ճակատի ընդհանուր կերպարին.

Արցախյան վերջին որմնափակ խաչքարը գտնվում է Գտիչ վանքից շուրջ 12—13 կմ դեպի հարավ, պատմական Կարմրակուճ, Թղասեռ, Որթնաշատ, Տայք և Հադրութ գյուղերի միջև տարածված Վանք գյուղի հյուսիս-արևելյան եզրին տարածված հին գերեզմանատան մեջ: Կոթողից ոչ հեռու կա մի եկեղեցի, որը գրականության մեջ հայտնի է Սպիտակ Խաչ վանք անվամբ: Ինչպես նշվեց վերևում, այս կոթողը մեզ հայտնի բոլոր թվակիր որմնափակ խաչքարերից ամենավերջինն է, որը կրում է 1346 թվականը և ունի 290 սմ լայնութ., 230 սմ հաստություն, շուրջ 4 մետր բարձրություն: Կոթողը կերտված է համակ սրբատաշ դեղնա-սպիտակավուն քարերով: Նրա արևմտյան ճակատում, որի մեջ ագուցված է մեկ գեղաքանդակ խաչքար: Ծածկն իրականացված է երկթեք տարբերակով: Կոթողի գլխակալ կիսակամար քարի վրա վեց տողով փորագրված է հետևյալ շինարարական արձանագրությունը.

ԵՍ ԱՋԱՄԻ ՈՐԴԻ ԻՇԽԱՆԱՑ ԿԱՆԿ
ՆԵՑԻ ԶԽԱՉՍ (Ի) ՓՐԿՈՒԹԻ ՀՈԳ
ՈՅ ՈՐԴՈՅ ԻՄՈՅ ԱՍՈՒԴԱՐԱՅ ՈՐ
Ք ԿԱՐԴԵՔ ՅԻՇԵՑԷՔ Ի ՍՈՒՐԲ Յ(Ա)Ղ
ԱԻԹՍ ՁԵՐ ԱՂԱՉԵՄ: Ի ԹՎ (ԻՆ)
ԻՍ:Զ:Ղ:Ե:

Կոթողի հյուսիսային, հարավային և արևելյան ճակատներից ամբողջապես պոկված են և տարված հարթ երեսապատի բոլոր քարերը և տեղում մնացել են միայն արևմտյան ճակատի բարդ պրոֆիլավոր քարերը: Արցախյան նմանօրինակ կոթողներից սա միակն է, որի վերին կամարաձև մասը լուծված է ոչ կիսաշրջան, այլ երկկենտրոն՝ սլաքաձև տարբերակով:

Արցախյան որմնափակ խաչքարերը, որպես միջնադարյան հայ ճարտարապետության ինքնատիպ կառուցվածքներ, հետագայում անկասկած կդառնան առավել խոր և հանգամանալից ուսումնասիրության առարկա:

ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

[6] **Սեդրակ Բարխուդարյան**, «Դիվան հայ վիմագրության», հ. 5, էջ 184: